

Հ. Յ. Գաթրճեան, նկատի առնելով Ձ. հատուածն ինքն իր մէջ, այն չափով, որով պահուած է Կանոնագրքին մէջ, կը գրէ. «Ներքուստ ըստ նիւթոյն արժէք մը չունենալէն զատ՝ լեզուն ալ ան աստիճանի խեղճ է, որ եւ ոչ մէկալ հինգ նախընթաց կտորներուն լեզուն կրնայ հեռուանց իսկ համեմատուիլ: Յոյներէն ստիպուած զանազան զեղծամբ ապականած մատաղի սովորութիւնը արդարացնելու նպատակաւ չինուած կտոր մըն է, գուցէ նոյն իսկ թ. դարուն» (Ներածութիւն Հայոց Կանոնագրքի անտիպ):

Թէ զրուածքս կեղծիք մըն է Ս. Սահակի անուամբ, կը վկայէ նաեւ անոր լեզուն: Ոչ միայն թարգմանութիւն չէ այն, յունարենէ կամ որ եւ է ուրիշ լեզուէ «ի ձեռն Եզնակի», այլ եւ Ն. դարու հայերէնի կնիքը չունի: Թէպէտ թեթեւօրէն, բայց ենթարկուած է Յունարան Դպրոցի նորահար լեզուի ազդեցութեան. ունի Ձ. դարէն ետքը հայ լեզուի մէջ մուտ գտած նորարանութիւններ: Յանկ մը այդ բաներու բաւական է ցոյց տալու համար, թէ ան է. դարու ծնունդ է:

ՀԱՄԱԲԱՐՐԱՌ

Ամենարուական 116	Մարդկային 110
Անգղիշարար 133	Մերձակայ
Անթարգմանելի 116	Յարմարեմ 107, 116
Բարերանեալ 114	Յարմարեմ 110
Բացորոշարար 110	Նախակարգեմ 110, 133
Գործականութիւն 129	Նախան 112
Ընծայաբերութիւն 130	Նորածեւեմ 115
Կարապետութիւն 116	Չափաւորացէս 129
Կենցաղ 128	Պատասխանեմ 126
Կոսմոլ 128	Սահմանադրեմ 110
Հարկաւորացէս 130	Սահմանադրութիւն 110, 115
Ճրագու 112	Սրբանեալ 133
Մասնաւորեմ 133, 134	Տախտ 112
Մատաղենիք 111, 113	

Այս «Գիր աւանդութեան» կամ «Սահմանադրութիւն կարգաց» գրութիւնը Յովհ. Օձնեցի իր Հաւաքումը կազմած ժամանակ (իր 720ին) ունէր իր ամբողջութեան մէջ: Թէպէտ պայն քաղուածարար միայն ներս առաւ իր Հաւաքումին մէջ, բայց կ'երեւայ թէ մնացած մասն ալ իրրեւ Յաւելուած կցեց իր աշխատութեան: Այսպէս պահուած է ան Կանոնագրքին մէջ, ուր կարգացած է պայն ներսէս Ենորճալի (+ 1173), եւ որմէ կոչուած մ'ալ յատաճ կը բերէ, աղբիւրը մատնանշելով. «Գրեալ է ի Կանոնական գիրս Ս. Սահակայ հայրապետի» (տե՛ս վերը § 5 դ):

Նոյնպէս նաեւ Բարձրբերդցի Կոստանդին Ա. կաթողիկոս Գրիգորի Լուսաւորչի վաւերական որոշումը համարած է Ձ. հատուածս, իր առ Արեւելեան Վարդապետս գրած կանոններու մէջ, ուր կը կարգանք (Կան. ԻԳ). «Զի սուրբ Լուսաւորչին գրեալ է որ Քահանայք զժողովուրդն տասանորդէ, եւ եպիսկոպոսն զքահանայն եւ հայրապետն զեպիսկոպոսունս» (Կիր. Գանձակեցի, էջ 172):

12. Այս տեղ պիտի ամփոփեմ այն մանր կանոնական գրուածքները, որոնք Ս. Սահակի անուամբ կը յիշուին Զեռագիրներու մէջ: Ասոնք ըստ մեծի մասին Կանոնագրքէն հանուած եւ աղճատուած հատակոտորներ են:

Ա. «Գիր եւ կանոնք Ս. Սահակայ վասն խողից սուրբ լինելոյ եւ հրաման տալոյ ուտելոյ հրաւտացելոյ (Ձ. հաւատացեալ): Յորժամ ստեղծ արարիչն Աստուած...»: Այս հատուածը գտած եմ էջմիածնի թ. 652, 64բ ձեռագրին մէջ, գրուած ժ. դարուն: Դժբախտարար թերի մնացած է օրինակութիւնը:

Առանց տարակուսի այս ալ Սահակի ընծայուած Կանոնական գրութիւններէն է, այլուստ անձանօթ:

Բ. Յովհաննէս Երզնկացի իր «Սրատ հաւարակաց քրիստոնէից» գրուածքին մէջ շատ յաճախ կտորներ յառաջ կը բերէ Սահակի ընծայուած Ա.—Ձ հատուածներէն, տեղ տեղ քաղուածարար, նաեւ ընդլայնումով. ասոնց թուին մէջ են նաեւ հետեւեալները, որոնք ինքնուրոյն սկզբնաւորութիւններ ունին եւ կարող են հաւատք արթնցնել, թէ ինքնակաց կանոններ ըլլան.

ա. «Սահակայ կանոնք: Պարտ է քառասունք կատարել. մեռելոյն, զի առաքելական հրամանք է...: Այլ եւ մեռելին անկողինն եւ զհանդերձն ի վանքն եւ ի ձեր քահանայիցն յեկեղեցին տուք... եւ մեռելքն աղօթիցն եւ պատարագացն մասնակից լինին»: Քաղուածարար հանուած է Ձ. հատուածէն (Սոփերք էջ 112):

= Վիեննայի թ. 170, 107բ (Տաշեան, Յուցակ 485): էջմ. 228, 108բ (1457էն):

բ. Սահակայ վասն Քահանայից: Սորհրդական եւ նուէրք ամենայն եւ ընծայք զոր տան քահանայիցն. զոր ի հնուին Աստուած Մովսէսի հրամայեաց. զնոյն եւ սուրբն Գրիգոր սահմանեաց յորժամ գըրբմ—

արն կարգեաց ի քահանայութիւն...»: վ. «Ի յաճախումն ստացուածոց իւրեանց»: Քաղուածարար հանուած Ձ. հատուածէն (Սոփերք, էջ 129—132):

= Վիեննա, թ. 58, 372բ: 170, 107բ—108ա: 534, 81բ—82ա. Եւայլն:

գ. Չի ի սուրբ հայրապետն Իսահակ կանոնեալ է. Տղայոցն հասակաւ պսակ մի գիւցեն քահանայքն (Վիեննա, թ. 58, 374բ եւ 354ա = Սոփերք, 95—96 (Կանոն ԺԵ.): — «Եւ սուրբն Սահակ կանոնեալ է եւ զայս, եթէ Գինի ի լալիս մի ըմպեսցեն...: Վիեննա, թ. 170, 107ա: 534, 80բ = Սոփ., էջ 98 (Կան. ԻԱ.): — Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին: Մկրտութիւն առնել երկիւղածութեամբ...: Վիեննա, թ. 134, 106ա=91 (Կան. Ե.): Կը լուծմ յիշել ուրիշները:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԵՍՊՈՒՐԵԿԵՆ - ՎԵՆԻ ՎԵՆՔԵՐՈՒ ՄԵՍԻՆ ԸՆԳՀԵՆՈՒՐ՝ ԶՆԵՆՁԵՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարունակութիւն):

10. «ՄՈՒՏՔ Ի ՎԱՆՍ», ՎԱՆՔԻ ԱՆԿԱՄՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վանքի մը անդամակցելու — անոր միարանն ըլլալու եւ հոն կրօնաւորելու — համար բնական պահանջ էր որ՝ հետամուտը սէր ու յարում ունենար — կոչուած զգար — այդ վանքի մէջ հետապնդուած նպատակին ձգտելու եւ այն տեղ տիրող կանոններու համեմատ իր օրն ու կեանքը ձեւելու:

Հարկաւ հայկական վանքերը ունէին որոշ չափանիշ ու կանոն հետամուտն ընդունելու եւ կրթելու: Այսպէս Սահակ Զորափորեցի թոյլ չի տար եպիսկոպոսին «կրօնաւորել սքեմաւորութեամբ եւ զիւր գործ թողուլ» (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 131, Կան. Բ.): Նաեւ ուրուկին՝ բորոտին կ'արգիւնէ՝ «սքեմ առնուլ կրօնաւորութեան (անդ, էջ 132):

Մոնոզոն եւ կրօնաւոր յատուկ արարողութիւններ կային ըլլալու վանքերու մէջ:

Ս. Ղազարի մէջ կը գտնուի հին Մաշտոց մը²⁴, զոր Հ. Հայունին ժԱ. դարու արտադրութիւն կը համարի: Անոր մէջ կան՝ «Կանոն մոնոզոն առնել ըստ հերակտրութեան Եզիպտացոցն եւ սուրբ լերինն Պաղեստին արանց եւ կանա(ն)ց, որք զկուսութիւն յանձն առնուն ի Քրիստոս» եւ «Զեռնադրութիւն կրօնաւորութեան արժանացելոցն ի չափ հասակի կատարման տիրոցն եւ նմանակցութեան ի Քրիստոս մեռելոյն» (Քաղմաղէպ, 1923, էջ 46—47): «Ուտի եւ կան երկու կարգեր տուչութեան վանական կրկին աստիճանաց՝ մոնոզոնութեան եւ կրօնաւորութեան, որոնք իրարմէ կը տարբերին խտտակրօնաւորութեամբ եւ կը վերաբերին արանց եւ կանանց միանկրամայն» (անդ, էջ 46): Արդ՝ առաջին կանոնին համաձայն մոնոզոնութեան հետամուտը կամ նուիրեալը կը տանին եկեղեցոյ դուռը եւ ԻԳ. սաղմոսը կ'ըսեն: Յետոյ անոր զլուխը կը բանան, գօտելոյժ կ'ընեն եւ ձեռքերուն մէջ երկու մոմ կը դնեն: Ապա կը հրամայեն ծնրադրել եւ «Հարանց Հօր» կամ առաջնորդին պատասխանել թէ ինչո՞ւ մոնոզոն կ'ուզէ ըլլալ եւ թէ՛ ազատակամ է որ՝ մոնոզոնութիւն կ'ընտրէ: Բաւարար ու հաստատական պատասխանին վրայ՝ սաղմոսերգութեամբ մուտք կը գործուի եկեղեցի, ուր աղօթքներ կ'ըլլան ու նուիրեալին խրատ կը տրուի՝ մասնաւորապէս ընտանեկան կապէ հրաժարելու եւ ժուժկալութեան մասին: Որմէ յետոյ նա ինքին առաջնորդին կը մատուցանէ մկրատը կամ կտորցը, որով անիկա անոր մաղբէն փունջ մը կը կտրէ: Ապա ուրիշ մէկը զանիկա առանձին տեղ մը մեկուսացնելով՝ զլիտն մագերը ամբողջութեամբ կը կտրէ՝ կը սափրէ: Ու վանական կամ կրօնաւորական զգեստ հագցուցած՝ կը ներկայացնէ առաջնորդին, որ արարողութիւնը կը շարունակէ՝ սաղմոսարարողութիւնը կը շարունակէ՝ անորմէնքով՝ ընթերցուածներով եւ աղօթքներով: Աւարտումէն յետոյ միարանները կ'ողջապուրեն իրենց նոր ընկերը, որ ութը օր գեւ եկեղեցի կը մնայ — աղօթաւոր (Քաղմ. 1923, էջ 46—47 հմմտ. նաեւ Հայունի Հ. Վ.,

²⁴ Միթթարեան Հայրերու այս օրինակին եւ կրօնաւոր ընկեր արարողութեան մասին հմմտ. Conybeare F., Rituale Armenorum, Oxford, 1905, էջ 136—137: Համանման օրինակ մը վատիկանի մէջ հմմտ. Tisserant E., Codices Armeni, Romae, 1927, էջ 80): — Արեղային քահանայական ձեռնադրութեան մէջ ալ որոշ տարբերութիւն կայ: Ամէնէն վերջ եպիսկոպոսը «Հանէ զքրօնն եւ ապա զգեցուցանէ զվեկորն» (Մեծ Մատոց, Կ. Գ. 1807, էջ 272—277):

Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ 1923, էջ 423):

Կրօնաւորութեան արարողութեան սկիզբն ալ գրեթէ նոյնաձեւ է, այն տարբերութեամբ, որ նուիրեալին մագերը եկեղեցւոյ առջեւ խաչանման կը կտրուին եւ հերազուրկ զլիսուն վրայ կրօնաւորական գտակը կը դրուի: Անկէ վերջ մուտք եկեղեցի՝ Աւետարանով, խնկով ու մոմով: Նուիրեալն ալ երկու ձեռքերու մէջ մոմ ունի: Հասնելով խորանին առջեւ՝ զանոնք սարկաւազին կը յանձնէ եւ ծուր կը դնէ: Սաղմոս ու քարոզ իրարու կը յաջորդեն եւ աղօթքի պահուն առաջնորդը աջը հետամուտին վրայ կը դնէ: Ապա՝ վերջինս ոտքի ելլելով եւ ձեռքերը վեր բարձրացնելով հրաժարումի բանաձեւը կ'արտասանէ — երեք անգամ: Յետոյ նորէն քարոզ ու աղօթք եւ ապա՝ զգեստաւորում կամ հանդերձներու տուչութիւն: Եւ դարձեալ աղօթք ու վերջ արարողութեան ողջագուրումով (հմմտ. վերը յիշուած տեղիքները):

Այս արարողութիւնը, որ Արեւմտեան լատին եկեղեցիէն փոխառութիւն է, կը կիրարկուէր Հայոց քով սկսեալ հաւանօրէն ժ.Գ. դարէն. (հմմտ. Գր. Տաթեւացի՝ Ամբան Քարոզ լԹ.):

Ներսէս Լամբրոնացին Լեւոն թագաւորին կը գրէ՝ «Գտաք զի չունէին²⁵ (Հայք) օրհնութիւն կրօնաւորաց, այլ քահանայացուցեալ միայն զձեւ տային» (Ատենարանութիւն եւ թուղթք եւ ճառք, Վենետիկ 1838, էջ 237) եւ կը յաւելու՝ «զոր տեսեալ առ նոսա (Լատինս) նախ օրհնեմք կրօնաւոր եւ ապա սարկաւազ եւ քահանայ կատարեմք ըստ նոցա (անդ՝ էջ 237) — կրօնաւոր՝ փոքր աստիճանաւոր եւ կիսասարկաւազ իմաստով եւս կը գործածուի:

²⁵ Յովհաննէս Բարձուշան Հայերը կ'ամբաստանէ՝ «ԺԼ. Վասն թէ ոչ ընդունին նոքա գտորբ խորհուրդս եւ ոչ լինին հաղորդ նոցին, յորժամ ի միացնակեան կարգ մասնեցին իրրեւ զմեզ: — Եւ միանունն այնքի, որ երկուսն զգեցեալ զհանդերձն չեն նոքա միանունք: Նա եւ ոչ իսկ առնին տրեք պաշտամունք եւ աղաթք ի վերայ նոցա, այլ սյր իւրաքանչիւր յորժամ եւ կամ ի արկանէ զիւրեան զհանդերձնէն եւ ուտէ միս յամենայն ժամանակի անխափան՝ ամենայն համարձակութեամբ եւ առանց համարկորին զնկոյ: Ի մէջ հազարաց միանուն մի կապարեալ ոչ գտանիցի ի նոսա, որ ընկալեալ իցէ զհանդերձն աղաթիւք եւ պաշտամամք ըստ կարգաց զհերան փոքրելոյ» (Վարդանեան 2. Ա., Յովհաննէս ժ. Բարձուշանի Հայոց կաթողիկոսին գրած թուղթք, Վիեննա 1923, էջ 89—90):

Ստի Մաշտոցը (Ս. Ղազար, 1345ին գրուած) ունի լատին լեզուէ թարգմանուած նոր կարգ մը՝ «Օրհնութիւն մոնոզոնի ըստ Հոռոմայեցոց եկեղեցւոյն սովորութեան» եւ «Օրհնութիւն կուսանաց²⁶ եւ սյրեաց» յորժամ ընծայեն զանձինս եպիսկոպոսին ի կարգ կրօնաւորութեան» (Բազմամէյ 1923, էջ 74):

Ս. Ղազարի ժԱ. դարուն գրուած (վերը յիշուած) Մաշտոցին մէջ կը գտնուի զեռ՝ «Կանոն հայր առնել» այսինքն վանքի առաջնորդ օրհնելու կանոն (հմմտ. Բազմամէյ 1923, էջ 74): Իսկ ժ.Գ. դարուն Սիսի մէջ արտագրուած Մաշտոցի մէջ կը հանդիպինք՝ «Օրհնութիւն Աբբայի կամ Մայրպետի», որ լատիներէնէ եղած թարգմանութիւն է (անդ, էջ 74. հմմտ. վանական առաջնորդներու կարգումի համար Conybeare, Rituale Armenorum, Oxford, 1905, էջ 157—161, նաեւ Տաշեան, Յուց. հայ. Չեռ. կայս. Մատ. ի Վիեննա, էջ 391):

Որ եւ իցէ վանքի մը անդամակցողն ու անոր առաջնորդ ընտրուողը պէտք էր վանքին մէջ եւս մնալ, անոր կանոններու եւ սովորութիւններու համաձայն ապրիլ, եւ անոր յառաջադիմութեան նպաստել իր հոգեկան ու մարմնական կարողութիւնները սպաս զնելով: Սակայն կային պարագաներ, որոնց մէջ ներուած էր վանքէն մշտապէս կամ աւելի ստէպ ու զիւրաւ՝ ժամանակաւորապէս հեռանալ: Այսպէս՝ երբ քաղաքական կացութիւնը կեանքի վտանգ կը ներկայացընէր, երբ առաւելագոյն օգուտ մը այդ կը յանձնարարէր կամ կը պարտադրէր եւ կամ մէկը թեմական առաջնորդութեան կը հրաւիրուէր:

Պարտաւ ժողովի ժե. կանոնն է՝ «Կրաւաւոր, որ առեալ է զկրօնն սրբութեան եւ տեղափոխ լինի յուխտէ յուխտ՝ արդիւեալ լիցի եւ մի ոք ի շխեսցէ զայնպիսին ընդունիլ, այլ որ ընծայեցան ի Քրիստոս, ի նմին տեղի կատարեսցէ զառաքինութեան իւրոյ զհանդէս, բայց եթէ յառաջնորդաց կոչեսցի յառաջնորդութիւն եկեղեցւոյ եւ վարդապետութիւն ունիցի ի լրումն աստուածային ուսման առաջնորդին» (Ղլրածեան, Կան. Հայոց, էջ 169—170):

²⁶ Հ. Հայրենին մատենագրութեան քաղերով եւ լրացնելով «Հայուհին» գրութեան մէջ (Վենետիկ 1936, էջ 175) կու տայ կիներու եւ օրիորդներու վանք մասնելու արարողութիւնը կամ ծիսակատարութիւնը:

«Թէեւ արդիւուած է մի միարանութիւնից միւս փախչելն, ըստ որում մինչեւ անգամ նդովուում են առանց առաջնորդի կամքին վանքից ելլողներին: Սակայն ընդհանր. Հայրապետը կարող է երբեմն ստիպողական հանգամանքներ տեսնել եւ իրրեւ իրաւատէր ժողովոց կանոնների որ եւ իցէ ելք տալ յօգուտ եկեղեցու» (Աբարատ, 1894, էջ 364): Գարձեալ՝ կաթողիկոսին անկ է՝ «Ուրիշ միարանութիւնից եկած եկեղեցականին ընդունել կամ տեղափոխել» (անդ, էջ 361):

Սահակ Զորափորեցի կաթողիկոս նոյն իսկ բորոտ կրօնաւորին թոյլ չի տար՝ «Թողու զտեղին եւ ի հիւանդանոց երթալ... այլ ի նմին մշտնջենաւորիլ յանապատի. բայց եթէ առ ի չգոյէ ունողաց հարկ լինիցի» (Ղլրածեան, Կան. Հայոց, էջ 132):

Սակայն յանցաւոր եւ անուղղայ վանականներու վանքէ մերժում եւ անդամակցութենէ զրկում իրրեւ պատիժ եւ նախազուլութիւն ուրիշներու զայթազուլութեան եւ սայթաքումի, ընդունուած էր: Շահապիվանի ժողովը կը սահմանէ (Կան. Թ.). «Ապա եթէ ի կարգէ պաշտօնէից եւ յուխտէ արեղայից երթեալ իցեն ի հարցուկս, կամ որդի երիցուն՝ զպատուհաս, զտուգանս, զպաշարութիւն աշխարհականաց կրեսցեն եւ ի կարգէ պաշտօնէիցն ի բաց կացցեն, եթէ այր եւ եթէ կին երթեալ իցեն ի հարցուկս կանոն այդ լիցի» (Ղլրածեան, Կան. Հայոց, էջ 68): Վաչականի կամ Աղուանից ժողովի Ե. կանոնն է՝ «Վանաց երէց կամ վանական, եթէ ի վանաց զայթանք առնէ, ի վերայ յայտ լինի՝ անարգեսցեն զնա եւ ի տեղւոյն ի բաց արասցեն եւ զխոստակն յիկեղեցին կայցեն» (անդ, էջ 194):

Վանքերու ներքին կեանքի եւ վանականներու վրայ աշխարհիկ մեծերու ոտնձգութիւնները կ'արդելու հետեւեալ կանոնը.

«Ժ. Ոմանք յաղատաց ի վերայ վանաց իշխանութիւն առնեն եւ զվանական գոր կամ մին հանեն եւ արկանեն (զոր եւ կամին գանեն եւ հարկանեն), զոր չէ արժան եւ օրէն եւ ոմանք ընտանեօք ի վանան նստին՝ արհամարհեալ զեկեղեցեաւն Աստուծոյ՝ անպատկանելի անամօթութեամբ. արդ եթէ լուեալ մերս հրամանի՝ զարձցին եւ թողցեն յառաջնորդս զտեսութիւն եկեղեցւոյն կարգել եւ յօրինել ըստ հաճոյիցն Աստուծոյ,

այնպիսեացն յառաջագոյն գործելեացն յանցանաց թողութիւն լիցի եւ ի մեր միարան ժողովոյս օրհնեալ եղիցին. ժողովրդեամբ եւ պողարբութեամբ եւ ուխտաւորեալ ընծայիւք նուիրելովք երթիցեն ի վանան եւ աղօթեսցեն. որպէս արժան է յիւրեանց հասանց վաստակս, բայց ժլատութեամբ մի իշխեսցեն. զի եղիցին օրհնեալ յԱստուծոյ եւ ի մեր ժողովոյս» (Ներսէս Շինողի զուամբատ, 1905, էջ 195), ուր եւ լոյս ընծայուած Մխիթար Գօշի դատաստանագրքին մէջ սոյն կանոնին համաձայն գրուած հրահանգը «Յաղագս դատաստանաց վանաց. ոմանք տանուտեարք եւ աղաութ...» (հմմտ. Ղլրածեան, Կան. Հայոց, էջ 127):

12. ՎԱՆԱԿԱՅՐ ԿԱՍ ՎԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Ամէն վանք որքան ալ փոքր ըլլար կամ սակաւաթիւ անդամ ունենար, ունէր իր առաջնորդը կամ վանահայրը: Այդ առաջնորդը կրնար ըլլալ եպիսկոպոս, վարդապետ կամ արեղայ: Վերջին շրջաններուն նաեւ աշխարհիկ՝ երբ վանքը կղերական միարան չունէր եւ կամ սոյն պաշտօնը վարելու անկարող էր:

Վանքերէն ոմանց առաջնորդները — մասնաւոր մեծ կամ առաջնորդարան եղած վանքերու պետերը — կամ իրաւունքով եւ կամ սովորութեամբ եպիսկոպոս էին եւ կամ բացառաբար, երբ արդէն եպիսկոպոս էին եւ վանքի առաջնորդութեան կամ վանահայրութեան պաշտօնը կը ստանձնէին եւ կամ յետոյ իրենց անհատական արժանիքին համար սոյն բարձր աստիճանին կը հասնէին:

Չեմ կարծեր թէ սխալ ըլլայ ենթադրութիւնս, երբ տուեալներէ եզրակացընեմ, թէ գաւառական՝ առաջնորդարան վանքերու մէջ բաց ի եպիսկոպոս — հայրապետ առաջնորդէն՝ կար ներքին կամ ստորակարգուած վանահայր մը — մեծաւոր մը —, որ միայն վանքին վերաբերուած հարցերով կը զբաղէր եւ եպիսկոպոս առաջնորդ վանահօր թեւ ու թիկունք կ'ըլլար (հմմտ. Վարդի եւ Արգելանի վանքերը՝ ՎՎՎ. Ա. էջ 290—339, 363—378):

Վանահօր ընտրութիւնը միարաններու անկ էր: Սակայն ժողովուրդը իր մասնակցութիւնը կը բերէր եւ զայն կը պահանջէր

մանաւանդ ընտրութեան մէջ այն վանա-
հայրերու, որոնք անոր վրայ իրաւասու-
թիւն ունէին իրրեւ գաւառի՝ քաղաքի՝
գիւղի եղիսկոպոս կամ առաջնորդ 27 կամ
հովիւ հոգեւոր 28 :

Անոր ընտրութիւնը կամ եկեղեցական
գաւառական վերին մարմնէն՝ հայրապե-
տէն 29 եւ կամ էջմիածնի՝ Աղթամարի կա-
թողիկոսէն եւ կամ Կ. Պոլսոյ Պատրիարքէն
կը հաստատուէր (հմմտ. Վ.Վ.Վ. Ա. էջ 35,
39, 80, Բ. 492, 495, 547, Մեկիք Թանգեան,
Հայ. եկեղ. իրաւունքը, Բ. էջ 167 եւ Սահ-
մանադրական հրահանգ ազգային վանորէից
համար, Կ. Պ. 1872, էջ 11) :

Շահապիւմի եւ Դուբնի (Ա.) ժողով-
ները ազատներու կամ իշխաններու յորդոր
կը կարգան վանքերու վրայ՝ առանց եկեղե-
ցական կանոններու նկատողութեան իրենց
ճորտութիւնը չտարածել եւ մանաւանդ կա-
շառքով առաջնորդ դնելու զօգնել (հմմտ.
Մեկիք Թանգեան, Հայ. եկեղ. իրաւունքը,
Ա. էջ 352 եւ 404, հմմտ. Մխիթարեան Ա.
արքեպ. Պամ. ժողովոց Հայաստանեայց
եկեղեցւոյ, էջ 85, Մխիթ. Գօշ՝ Դատաս-
տանագիրք, էջ 87) :

Բար-Շուշանի թուղթին մէջ Հայաս-
տանի վանքերու մասին սա տխուր յայ-
տարարութիւնները կան :

«Նա եւ հաստատութիւն իսկ վանօ-
րէից եւ մենաստանաց այսպիսի է. երթայ
վանական ոմն եւ տայ արծաթ եւ կաշառ

27 Ատրպատականի՝ Արտազի առաջնորդը կը կո-
չուէր «խալիֆա կամ Միլաթ-բաշի» (Տարազ, 1892,
էջ 329) : Անոր առաջնորդներէն են նաեւ Սա. Մխի-
թարեան եւ Ն. Մեկիք-Թանգեան եպիսկոպոսները
(անդ, էջ 329, 401) :

28 Պարտաւի ժողովը կ'ըսէ՝ «Վանք շինեցան ի
գիւղս, զի անդ հանդիպէն առաջնորդը եկեղեցւոյ եւ
հիւրք եւ աղբատը» (Ղրտնեան, Կան. Հայոց. էջ 10)
Սեւանի վանահայրը ժողովրդեն եւ վանականներէ
կ'ընտրուի եւ էջմիածնի Սինողէն կը հաստատուի
(Արեւել. Մամուլ, 1896, էջ 48) :

29 Շահապիւմի ժողովը կը սահմանէ (ԺՁ.
կան.) «Որ եպիսկոպոս կամ ինչի առաջնորդ կամ
հովիւ կամ վանս կամ անապատ շինել եւ սաղարու-
թեան ցանկանայցէ կամ դաւառի կամ գիւղից կամ
անապատաց, լուիցն զինչ ասին. Մեծութիւն թէ
ապի գայցէ, մի յօժարեացի տաղանդ անուր ի
վարձու, պահել պարտ է, զուցէ տակոսիք պա-
հաւար եպիսկոպոսն է յաշխարհին առանց կամաց
անապատուոր առանց գաւառի եպիսկոպոսին չէլիս
ինչի եպիսկոպոս կամ երէց կամ ազատ որ դատու-
րաց եւ կամ շինական վանս առաջնորդս կարգելոյ եւ
հովիւս պատրաստելոյ յեկեղեցւոյ. . . ապա կ'արգե-
լու կաշառք տան ու կաշառք առնուր Ղրտնեան,
Հայոց. էջ 76—87 հմմտ. եւ Չաքաւանքի Գ.
կանոնը անդ, էջ 187) :

տեսոն տեղւոյն (գաւառապետին), եթէ հե-
թանոս եցէ իշխանն եւ եթէ քրիստոնեայ եւ
կորդէ յինքն զգլխաւորութիւն միայնակե-
ցաց, այսինքն զվերակացութիւն այս նիշ
վանաց եւ լինի այնուհետեւ տէր տեղւոյն եւ
իշխան յամենայնի, զնոց տայ եւ զնոց առ-
նու եւ քակէ եւ ձգէ ի յաջնորդութիւն, զոր
միանգամ ինքն կամի, հնազանդէ զեղբարս,
որ ընդ նովին կան եւ մնան իրրեւ զլերիս,
որոց չիք այնուհետեւ բնաւ իշխանութիւն
ընդ նմին կարգելոյ զիրաց վանացն, այլ մա-
տակարարի աւուր աւուր իւրաքանչիւր
ոպեպահ սոճիկ՝ հաց յոտի եւ շարահամ,
ունի արբայն վանաց զայն, զոր նայն կա-
միցի եւ արձակէ՝ զոր նայն ցանկանայցէ :
Նա եւ նոքին իսկ եղբարքն, քանզի առ ոչինչ
ի վանս համարին, ցանկ իսկ եւ հանապաղ
արձակերասանակ չըջին ի մենաստանաց ի
մենաստանս եւ յածին կոճին վանաց ի
վանս : Ապա յետ սակաւու միոյ եթէ գայցէ
այլ ոմն եւ կաշառարեկ զաէր տեղւոյն առ-
նիցէ, հանէ նա այնուհետեւ եւ մերժէ ի բաց
գրտաջինն եւ առնու գրաւէ գտեղի նորուն
եւ այսպէս յայս աւրինակ խոտլութեան
ճնդեալ ջերանին առանց դուլ եւ զաղար
ուստեք գտանելոյ» (Վարդանեան Հ. Ա.,
Յովհ. Ժ. Բար-Շուշանի Հայոց կաթողի-
կոսին գրած թուղթը, Վիեննա, 1923, էջ
80—81) :

Բար-Շուշանի թղթին այս յաւելուածին
բովանդակութեան մասին Տէր-Մինասեանց
կ'արտայայտուի՝ «Որքան էլ հակաճառա-
կան դրուածքին յատուկ չափազանցութիւն-
ներ լինին այս նկարագրութիւնների մէջ,
այնու ամենայնիւ նոքա բոլորովին զուրկ
լինել չեն կարող ճշմարտութեան կորիզից»
(Հայոց եկեղեցւոյ յարարութիւնները
Ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին,
1908, էջ 255) : — Դարեր վերջ Բարեւոյզի-
մէնս վարդապետը փաշայի մը 300 զիւրջ
զարի կը խոտտանայ եթէ զինքը Վանի եւ
Վարազի առաջնորդ ընէ (Վ.Վ.Վ. Ա. էջ 328) :
Ներսէս Ծնորճալին կը յորդորէ՝ «Մի
ոք ինքնակամ ախտիւ շարժեալ կաշառանօք
աւազաց յափշտակեցէ գառաջնորդութիւն
վանաց 30» առանց ժամանակին առաջնորդի

30 Հայաստանի մէջ ժառանգական վանահայրու-
թիւն կամ առաջնորդութիւն եւս մտած՝ սպրդած է :
Անոր գէթ ոգորած են Ն. Կամբրոնացի (Մեկնութիւն
Պատարագի, էջ 524) եւ Մխիթ. Գօշ (Դատաստանա-
գիրք, էջ 86, 93) :

1736-74

ընտրութեան եւ հրամանի : «Քանզի երկուք
են պատճառ իրաւացի փոխելոյ զվանաց ա-
ռաջնորդս՝ կամ վասն զանարժանս զոր-
ճելոյ արտաքոյ օրինացն Աստուծոյ եւ այն
ճշմարիտ վկայիք կամ եկեղեցւոյն ոչ չի-
նութեան՝ այլ աւերման լինելոյ պատճառ :
Եւ թէ առանց այսոցիկ՝ եթէ յանդգնի ոք
հակառակ յառնել, մեղանչէ յօրէնս Աստու-
ծոյ» (Ընդհր. Թուղթ, էջ 108) :

Հայ կաթողիկոսներն (ու աւազանին)
եկեղեցական կանոններու եւ Ն. Ծնորճալի
այս ուղեգծին ընդհանրապէս հետեւած են :
Թէեւ ջանացած են յարգել ընտրողներու
ազատութիւնն ու օրոշումը, սակայն պա-
րագաներու թելադրութեան ու պարտաւո-
րութեան ուշադիր եւ հետեւող՝ երբեմն առ-
աջնորդներու ընտրութեան հաստատու-
թիւնը մշտապէս զրացած են եւ կամ յապա-
ղած : Այս է՝ մանաւանդ երբ ընտրութեան
վաւերականութեան եւ ընտրելիին կամ թեկ-
նածուին արժանաւորութեան մասին տարա-
կոյս յարուցուած է եւ կամ կողմնակցութիւն
նկատուած : Անոնք երբեմն առաջնորդներէն
մին կամ միւսը կախակայած եւ նոյն իսկ
մերժած են — յանցանքի համար. բայց
ուղղութենէ յետոյ վերահաստատած (Վ.Վ.Վ.
Բ. էջ 493, 495 են) : Երբեմն, թէեւ շատ
ցանցառ իրենք ուղղակի — առանց ընտրու-
թեան — առաջնորդ ու վանահայր նշանա-
կած :

Առաջնորդներու նշանակումը կամ ըն-
տրութեան հաստատութիւնը ստէպ կոն-
զակներով տեղի կ'ունենար : Այդ ուրախու-
թիւն առթող կոնզակները՝ ստէպ զեղեցիկ
նկարչութեամբ օժտուած կ'ըլլային եւ նոր-
ընծայ առաջնորդին գովքը կը հիւսէին եւ
հպատակներուն հնազանդութիւն կը պար-
տադրէին (հմմտ. Վ.Վ.Վ. Բ. էջ 573) :

Վանահայր կամ վանքի առաջնորդ
կ'ընտրուէին այն անձերը, որոնք փորձա-
նութեամբ, առաքինութեամբ եւ գիտու-
թեամբ անուանի էին : Անոնցմէ գլխաւորա-
բար կը պահանջուէր խոնարհութիւն, որ-
պէս զի ամբարտաւանութեամբ իրենց իշ-
խանութիւնը շարաշար չգործածէին, հե-
զութիւն, որ հպատակներու պակասու-
թիւնները հայրաբար ուղղէին, բայց մանա-
ւանդ խոհեմութիւն ամէն ձեռնարկի ու
քայլափոխի մէջ : Յիշատակագրութիւն-
ներու մէջ ստէպ կարգաւոր առիթը կ'ունե-
նանք՝ «Ղուկաս հեղահոգի վարդապետն»

(Վ.Վ.Վ. Ա. էջ 27), «յոզներամ եւ հեղա-
հոգի Թորոս վարդապետի» (Ա. անդ էջ 29),
«հեղահոգի եւ աստուածարան վարդապետն
Սիմէոն» (Ա. անդ էջ 173), «իմաստուն եւ
հեղահոգի տէր Յովհաննէսի» (անդ, Ա. էջ
201, հմմտ. եւ Ա. էջ 267, 350—351, 367,
Բ. 390, 400—401, 408 են) :

Դարձեալ՝ «հանճարաւոր» (անդ՝ Ա.
էջ 40), «հանճարունակ» (անդ՝ Ա. էջ 75),
«հանճարեղ» (անդ՝ Ա. էջ 302), «բարե-
չնորճ» (անդ՝ Ա. էջ 75), «աստուածարան»
(անդ՝ Ա. էջ 173, 367), «իմաստուն» (անդ՝
Ա. էջ 226, 301, 302), «խորհրդական» (Բա-
նասէր, 1903, էջ 212) :

Ներսէս Ծնորճալին առաջնորդի անձէն
կը պահանջէ՝ «որ ոք երկուքումբ աչօք լու-
սաւորեալ իցէ, այսինքն զիտութեամբ աս-
տուածաշունչ գրոց եւ առաքինասէր գոր-
ծուք, անբժուկեամբ եւ ամենայն արդա-
րութեամբ. . .» (Ընդհրդ. Թուղթ. էջ 101) :
Առաջնորդը հարկ է փոյթ տանել՝ «աշա-
կերտելոցն եղբարցն» հոգեւոր եւ մարմ-
նաւոր կարիքներուն եւ պիտի հսկէ որ՝ գոր-
ծեն. սակայն՝ «յաղագս մարմնական գոր-
ծոցն զհոգեւորսն առնել իրրեւ զաւերորդ
իրս յոյժ վատթարաղոյն է» (անդ, էջ 104) :
Նա ուշադիր ըլլալու է՝ «Մի կողմնաւոր
բարուք զոմանս սիրել ջոկս առնելով եւ
զոմանս անտես առնելով, ոմանց աւելորդօք
բերիլ ի պէտան եւ այլոց ոչ հարկաւորօք
բաւականանալ» (անդ, էջ 105—106) : Կը
յորդորէ «ըստ չափոյ աշխատութեան»
հպատակները կերակրել ու խնամել եւ այս-
պէս ծոյլերը պատժել, բայց ծերերուն հան-
դէպ բացառութիւն կազմել (անդ, էջ 106) :
Դարձեալ՝ «Մի զնուրերալն յեկեղեցիս կամ
կենդանեաց միարանութեան կամ մեռելոց
յիշատակի անձին միայնոյ յափշտակեցէ
առաջնորդն, այլ ի պէտս եկեղեցւոյն ծա-
խեսցէ զայն» (անդ, էջ 108) : Նմանապէս
«Առաջնորդն հոգացէ, ինչպէս Մեծ անա-
պատի հիմնադիրները կը կարգեն, զամե-
նայն եղբարց զպէտան եւ բաշխեսցէ ում եւ
պիտոյսոցի» Առ. Դաւիթ. էջ 256) :

Ներսէս Ծնորճալին զեռ կը յորդորէ առ-
աջնորդները՝ հպատակին բարիքն ուղել եւ
յանցաւորը խրատել ու պատժել (Ընդհր.
Թուղթ. էջ 86—87 եւ 88) :

Յաճախապատումի հեղինակը կը խրա-
տէ՝ «Եւ որ փրկակացուն է՝ զգաստ լիցի
առ մեք՝ արտօսեալ նոյնատես առ հեռաւորսն,



իրատել զեղբարս խորագրութեամբ ըստ ժամանակին, ըստ ընդունելութեանն, ըստ բարուց սրտին: Չկրտսերն իրատել յաս եւ յերկիւղ Տեանն եւ ի հնազանդութիւնն եղբարցն... Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխորհ, եւ բարեզործ, օրինակ լինել ամենայն բարեձեւութեան կարգաց եւ կրօնից, աղօթից եւ պահոց, խոնարհութեան եւ հեղութեան, ուղղութեան եւ ճշմարտութեան...: Եւ զի վերակացուն հայր հոգեւոր կոչեցաւ եւ ծնեալքն առ ի նմանէ հոգեւոր որդիք ըստ կարգի ճգնաւորաց» (անդ, էջ 260):

Ստուգելու կեանքի փորձանութենէ քաղուած իրատաներ են, զորոնք թաթուլ ճրգնաւորը իր թովմաս աշակերտին կու տայ, երբ զանիկա «սոաջնորդ կացոյց... վանաց իւրոց»: Կը սկսի՝ «Որդեակ իմ թովմաս, այսօր կոչեաց զքեզ Հոգին սուրբ յառաջնորդութիւնն եղբարց քոց. արդ երկայնամիտ լեր եւ ողորմած ըստ նմանութեան Հօրն երկնաւորի...: Հայր հասարակաց ես եւ ի գործոյն մի վերջանայր: Ամենայն բարեձեւութեանց օրինակ զքեզ ցոյց եղբարց... երկայնամիտ լեր ամենայն սխալանաց եղբարցն... բայց կամապաշտիցն ամենեւին մի անայր... զոր ինչ յեղբարցն պահանջես՝ զայն ի քեզ ցոյց: Սակաւ խօսեաց եւ յոլով արդիւնացո, քարոզ՝ զգործքը ցոյց: Առաջնորդն ծնող է եւ բժիշկ եւ հիւանդացեալն կարօտ է սիրոյ եւ առողջութեան: Որդեակ, որ սխալէ եւ չէ իւր սովորութիւն մի պատժեր. զմանկագոյնսն ի հնազանդութեան կրթեալ եւ յաշխատութեան, զծերան ի սաղմոսերգութեան եւ ի ձեռագործս...: Միս եւ զինի կրօնաւորաց ոչ է ուտելի, այլ ճաշակելի է որոց պէտք են: Որ յախտ հիւանդութեան անկանի՝ զբնական կարգն թուրացո... իշխանութեամբ մի վարիւր առ եղբարսն. եւ զոր զու ոչ կարես առնել, զայն յեղբարցն մի պահանջեր. զմի ոք միայն մի առաքեր ի վանացն ի բան, այլ երկու... զպետան որպէս եւ հանգիպի եւ զշափն, որ զվտանդան բանայ... Չպատարազին աղօթսն եւ զերեկոյինն պարապեցո զձեռաք քո յաշխատութենէ: Որդեակ, յորժամ եղբայր քո սասնակեցի, մի անխոյժ ատներ գնորա կորստեամբ: Համբերեա նորա չար վարուցն եւ առելի գործոցն... Մի բաւական համարեր զհամբերելն, այլ ձեռն առուր եւ ջանա յարուցանել զնա եւ յազօ-

թելն արտասուեա վասն նորա... (Սովերք, Ժ. էջ 53—59):

Առաջնորդ ըլլալը լուրջ մտածող եկեղեցականին համար բաղձալի չէր, վասն զի պատասխանատուութիւնը անոր ուտերը կը ճնշէր: Ստիպուած էր վանքին հոգեկան, մտաւոր ու նիւթական³¹ մակարդակին զարգացումին եւ բարձրացումին վրայ խորհիլ: Նախորդէն առած ժառանգութիւնը միայն պահելով պիտի չզոհանար, այլ անոր վրայ պէտք էր յաւելուլ: Քաղաքական ծանր պարագաներու եւ դժուարութիւններու պէտք էր կուրծք տալ, խոհեմօրէն ընթանալ ու խոհեմօրէն հովուել: «Հայր» էր, «վերատեսուչ» էր (Ա. էջ 75 եւ 66):

Վանահայրներու պաշտօնը կ'երկարէր մինչև մահ, բայց հրաժարումի, տեղափոխումի, զրկումի եւ զահընկէցութեան դէպքեր պակաս չեն (Վ.Վ. Ա. 38 եւն): Վերջին շրջաններուն փոփոխութիւններ շատ սակաւ՝ Վարազ 1866—1899 ունեցած է 15 տեղապահ կամ առաջնորդ (Սուրհանդակ, 1899, Թ. 97):

(Շարունակելի է) Է. Է. ՈՍԿԵՆ

Ein Kommentar zur Apokalypse in der armenischen Handschrift Berlin 74.

Von Dr. M. A. van den Oudenrijn
Universitätsprofessor in Freiburg i. d. Schweiz.

(Fortsetzung.)

IV.

Wir geben jetzt den Wortlaut dieses Kommentares aus der Berliner Hs zu einigen Stellen der Geheimen Offenbarung. Nach jedem Abschnitt bringen wir den Nachweis der Quellen, soweit wir sie in der abendländischen Literatur ermitteln konnten. Die Hauptquelle, Berengaudus, wird zitiert nach der Ausgabe der Mauriner, abgedruckt

³¹ «Եւ ոչ լինել ումեք ստացուած առանձին, այլ ամենայն ինչ հասարակաց լինիլ եւ առաջնորդն հոգացէ զամենայն եղբարց պէտան եւ բաշխեցէ ում եւ պիտոյացիք» (Առ. դարձ. էջ 256): — Նիւթական նեղ կացութիւններու ատեն առաջնորդները կոնգրակներով եւ շրջաբերական թղթերով ժողովուրդին զբժուումներ կ'ընէին (Վ.Վ. Ա. էջ 72 եւն):

in der *Patrologia Latina* von Migne, 17, 841—1058. Der Kommentar des hl. Albert des Großen wird angeführt nach B. Alberti Magni Ratisbonensis Episcopi Ordinis Praedicatorum opera omnia... cura ac labore Augusti et Aemilii Borgnet (Vivès-Ausgabe), Bd. 38, S. 465—826. Das früher vielfach unter Alberts Namen abgeschriebene und gedruckte *Compendium theologiae veritatis* liegt lateinisch vor im 34. Band der gleichen Ausgabe, S. 1—306; eine armenische Ausgabe in der Übersetzung der Schule von Qrnay (1344) wurde vom Stifter der Mechitharisten besorgt in Venedig bei Antonio Bortoli im Jahre 1715.

Komm. zu Apok. I, 4.
Fol. 86a.

Ի Յովհաննէ առ Խօթն եկեղեցիս: Եօթն եկեղեցօքն՝ մի կաթօլիկէ եկեղեցի նշանակի, որ Եօթն¹ պարզեք Հոգոյն Սրբոյ լուսաւորեալ փայլէ յաշխարհի: — Ասիա հպարտութիւն լսի: Զի Քրիստոս ի մէջ հպարտից այսմ աշխարհի բազում խոնարհս եղիտ, սրով զեկեղեցի իւր կազմեաց: Ծանի՛ր զի զիրքս այս Եօթնեկի թուով բաղկանայ, որպէս են Եօթն եկեղեցիքն, Եօթն ճրագաբանքն, Եօթն աստեղքն, Եօթն ջահքն, Եօթն եղջիւրք զառինն, Եօթն կնիքն, Եօթն հրեշտակքն, Եօթն փողքն, Եօթն հարկանոցք փողոցն, Եօթն օրոտմունքն եւս եւ Եօթն հրեշտական ուլխողքն զսկաւառական, Եօթն զլուխ վիշապին եւ զազանին, որ նշանակեն զդեւն եւ զննոն: Նաեւ զիրքս այս Եօթն տեսիլս արամատեալ է: Առաջին՝ Եօթն թուխթ առ Եօթն եկեղեցիս առաքեալ վասն ուղղութեան: Երկրորդ է, յորում զաթոտն, յոր իմա՝² եկեղեցի, յերկինս եղեալ էտես, ի վերայ որոյ Քրիստոս նստեալ էր: Երրորդ՝ զպտոն եւ զզիրքն, եւ զկնիքն, որ³ էրաց: Չորրորդ՝ Եօթն հրեշտակքն եղեն տեսալ՝ զփողան հարկանոցն: Հինգերորդ՝ Եօթն հրեշտակքն զարձեալ երեւեցան սկաւառակ ունելովք: Վեցերորդ՝ յարութիւնն ենթադրի: Եօթներորդ՝ փառք [fol. 86 b] սրբոցն ի ձեւ քաղաքին Երուսաղեմի գրի: — Շնորհիք ընդ ձեզ յեկն: Աստ բարբերութիւնն ենթադրի, քանզի էր նախ քան

զինելութիւն աշխարհի: Հայր անսկիզբն է: Է եւ յեա լինելութեան աշխարհի՝ նախախնամելով զամենայն: Եւ զայլոց է ի կատարածի աշխարհի ընդ Որդոյ եւ ընդ Հոգոյն Սրբոյ՝ թաղաւորելով: Եւ ի «Հոգոյն սրբւրով»⁴ նշանակի Եօթնարիի շնորհքն:

Vgl. Berengaudus, 845—846. — Ասիա հպարտութիւն լսի. Bereng: *elata*, aber die Glosa ordinaria hat: *elatio*. — բազում խոնարհս եղիտ. Bereng hat: *multitudinem fidelium*; der Armenier dürfte in seiner lateinischen Vorlage „*humilium*“ gelesen haben, was zum gegebenen Kontext auch besser paßt.

Komm. zu Apok. I, 11.
Fol. 86b.

Զոր տեսանես, գրեալ: Եփեսոսն կամք կամ խորհուրդ լսի, Զմիւսնայ՝ երգող, Պերգամա՝ բաժանումն եղջերաց, Թիւատիրա՝ լուսաւորեալ, Սարգիս՝ սկիզբն զեկեղեցութեան, Ֆիլադելֆիայ՝ փրկող ժառանգութեանն Աստուծոյ, Լաւօղիկա՝ ցեղ սիրելի Տեանն: — Եփեսոս, որ նախկին գնի, սկիզբն զբժան իւր [fol. 87 a] քանչիւր նշանակէ, զի զինչ լուսալոյն քան զկամք բարի, որ ի զինչ լուսալոյն քան զկամք բարի, որ խոտորի ի մեղաց եւ հետեւի⁵ Քրիստոսի եւ առաքինութեանց: Եւ հետեւի Զմիւսնայ], զի նայ բարիք երգէ, որ զողորմութիւն Արարչին եւ Փրկչին ճանաչէ, որպէս ասէ Առաքեալն. երգեցէք եւ սաղմոս ասացէք Առաքեալն. երգեցէք եւ սաղմոս ասացէք Տեանն ի սիրտս ձեր⁶: Հետեւի Պերգամայ, Տեանն ի սիրտս ձեր⁶: Հետեւի Պերգամայ, յորպէս զերկուս եղջիւր բաժանեմք, յորպէս զսինքն. զերկուս եղջիւր բաժանումն առժամ ի մէջ շարոյն եւ բարոյն բաժանումն առժամ ի մէջ շարոյն ի մէջ ի բաց առնելով եւ զբանեմք, զչարն ի մէջ ի բաց առնելով եւ զբարին զործականելով, իբր ի խաւարէ առ լոյս ելանելով⁷: Վասն այն հետեւի թիւատիրն, Ելանելով⁷: Վասն այն հետեւի թիւատիրն, սաւոր է հոգին, զեկեղեցականս եւ զարգարի, վասն այն հետեւի Սարգիկէն⁸, որ թարգմանի սկիզբն զեկեղեցութեան: Եւ զի զեկեցկութիւն հոգոյն սկսանի ի կեանս յայս եւ կատարի ի հանդերձեալն, հետեւի Ֆիլա-

⁴ Vgl. den armenischen Text von Apok 1—4: Եւ Եօթն գորութեանց Հոգոյն
⁵ Hs: հետեւի.
⁶ Vgl. Eph. 5, 19.
⁷ Hs: Ելանել.
⁸ So im Text. Mehrere Zeugen der älteren wie auch der jüngeren armenischen Rezension geben tatsächlich „Sardica“ für „Sardis“ im Text von Apok. 1, 11 oder 3, 1. Vgl. Conybeare, *The Armenian Version of Revelation*, S. 162.

¹ In der Hs zweimal.
² Hs: ի նստա.
³ Hs: Ե զինիք նորա.